Էդուարդ Զոհրաբյան

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Բանալի բառեր – մտավորականություն, սոցիալական աշխարհ, կարգավիճակ, սոցիալական խումբ, բազմաշերտ փոխակերպություններ, արտագաղթ, ֆինանսավորում, հեղինակություն, հայեցակարգ, եսակենտրոն, հանրային շահ:

Մտավորականությունը /ինտելիգենցիա/ հասարակության սոցիալական այն խավն է, որի էության ընկալումները միշտ տարաբնույթ են եղել: «Ինտելիգենցիա» եզրույթի աղբյուրը լատինական «inteligentia» բառն է, որը նշանակում է ընկալում, ճանաչողական ուժ, ըմբռնման ունակություն:

Տակավին խոր հնադարում անտիկ գիտափիլիսոփայական միտքը մեկնաբանելով ինտելիգենցիա հասկացու;թյունը՝ այն ներկայացրել է որպես աշխարհը ճանաչելու միջոց: Հին աշխարհի մտածողներից Ցիցերոնը ինտելիգենցիան համարում էր միջոց, որով հոգին ճանաչում է շրջապատող աշխարհը, իրերի որպիսությունը: Միջնադարում ինտելիգենցիա հասկացությունն ընկալվում էր որպես աստվածային բանականություն և ինքնագիտակցություն, որի օգնությամբ կարելի է տեսնել իրերի բովանդակությունը և հասու լինել սեփական էությանը: Այս պատկերացումները նաև հետագայում խոր դրոշմ են թողել հասկացության խորքային բովանդակության վրա:

Հասկացության գիտական ըմբռնումից անցումն առօրյա խոսակցական լեզվին ուղեկցվել է իմաստաբանության վերափոխմամբ: Արդյունքում ծագել են պատկերացումներ ինտելիգենցիայի՝ որպես որոշակի սոցիալական խմբի մասին: Պատմական զարգացման ընթացքում մտավորականության, որպես պատմա-սոցիալական երևույթի մասին տարաբնույթ դրսևորումներ և գնահատման նոր չափանիշներ, մոտեցումներ են սահմանվել: Տարբեր երկրներում ձևավորվել են տարաբնույթ տեսակետներ: Ռուսաստանում ինտելիգենցիան սերում էր հին ազնվականական ակունքներից: Նրանք էին, որ ժամանակին ազնվականական հեղափոխության դարաշրջանի սկիզբն ազդարարեցին: Նրանց շարքերից դուրս եկան նաև ռուսական հեղափոխական-դեմոկրատական դարաշրջանի ռազնոչին փայլուն գործիչներն ու դեմքերը՝ Վ. Գ. Բելինսկի, Ա. Ի. Գերցեն, Ն. Պ. Օգարյով, Ն. Գ. Չերնիշևսկի և ուրիշներ: Ինտելիգենցիա տերմինը ռուսական իրականության մեջ սոցիալական նշանակությամբ սկսել է քիչ թե շատ գործածվել 19-րդ դարի 60-ական թվականների վերջերից: Ինտելիգենտ է մարդը, թե ոչ, Ռուսաստանում սահմանել է Ռ. Վ. Իվանով-Ռազումնիկը անցյալ դարի սկզբներին[1]: Մեկ այլ հեղինակ Պ. Միլյուկովը, ինտելիգենցիա էր համարում կրթված դասը, այսինքն մարդկանց այն խումբը, որը ստացել էր որոշակի կրթություն:

[1] В. В. Глебкин, Можно ли “говорить ясно” об интелигенции? Труды по культурной антропологии, М., 2002, с. 93.

Հայտնի է նաև Ն. Բերդյաևի բնութագրումը: Ռուսերեն «ինտելիգենցիա» բառը չունի իր զուգահեռը Արևմուտքում և սոցիալական այդ խումբը ոչ մի դեպքում չի համընկնում ինտելեկտուալների հետ, այսինքն՝ ինտելեկտուալ աշխատանքի և ստեղծագործող մարդկանց հետ: Նա գրում է. «Ռուսական ինտելիգենցիան բոլորովին այլ բովանդակություն ունի, որին կարող են պատկանել մարդիկ, ովքեր չեն զբաղվում մտավոր աշխատանքով և, առհասարակ, մտավորականներ չեն… Ինտելիգենցիան հիշեցնում է վանականների ուխտ կամ կրոնական աղանդ՝ իրեն հատուկ բարոյականությամբ… Ինտելիգենցիան մեզ մոտ գաղափարական, այլ ոչ թե պրոֆեսիոնալ և տնտեսական խումբ է»[1]: Բ. Ա. Ուսպենսկին իր «Ռուսական ինտելիգենցիան որպես ռուսական մշակույթի բացառիկ երևույթ» հոդվածում, շրջանցելով Ն. Բերդյաևի «վանական ուխտի» կամ Ռ. Վ. Իվանով-Ռազումնիկի «հակաքաղքենիական» բնութագրումները, ինտելիգենցիային հատկանշելու համար հիմք է ընդունում նրա ընդդիմադիր լինելը: Համառոտ այսպիսին էին ինտելիգենցիայի գնահատման ռուսական մոտեցումները:

Ֆրանսիայում, ինչպես գրում է Շառլ Քրիստոֆը, «այն խմբին, որին անվանում էին ինտելեկտուալներ, կարևոր ինքնություններից մեկն այն է, որ ինտելեկտուալները որոշակի պատմական հիշողություն կրողներ էին, իսկ ոչ հազվադեպ՝ նաև այդ հիշողության պահպանողները: Ընդ որում այդ հիշողությունը պատմական այն դրվագներին էին վերաբերում, որում ինտելեկտուալները հանդես էին գալիս որպես գործող դեմքեր»[2]: Այդպիսի դրվագներից էր Ա. Դրեյֆուսի գործը[3]:

Ենթադրվում է, որ ինտելիգենցիան բանական, կրթված ու մտավոր զարգացած մարդկանց խումբ է: Անգլերեն լեզվի «intellektual», «intelligence», «intelligent» եզրաբանությունները բնութագրում են մարդու մտավոր կարողությունները, եռանդը՝ միանգամայն անտեսելով հոգևորը, բարոյական բաղադրիչները: Անգլերեն լեզվի «intelligence» հասկացությունը կապվում է նաև անվտանգության խնդիրների հետ: Այսպիսի բացատրությունները, սակայն, չեն համընկնում ինտելիգենցիա սոցիալական խավի գիտական բնորոշման հետ: Վերջինս բնորոշվում է որպես արհեստավարժ, բարձրորակ մտավոր աշխատանքով զբաղված մարդկանց մեծ խումբ, այսինքն աշխատավորների մյուս հասարակական խմբերից ինտելիգենցիան տարբերվում է հիմնական աշխատանքի բնույթով և բովանդակությամբ[4]: Մտավորականությունը հիմնականում ներառում է մարդկանց այն ընդհանրությունը, որի միակ զբաղմունքը մտավոր աշխատանքն է՝ գիտությունը և մշակույթը: Սա ընդհանուր առմամբ վիճարկման ենթակա հայեցակարգ չէ, բայց պնդենք, որ անձը կամ անհատը կարող է լինել մտավորական իր էությամբ՝ չլինելով մտավոր ոլորտի աշխատող, գիտ-

---

[1] Бердяев Н.А., Истоки и смысл русского коммунизма, Париж, 1955.

[2] Шарль К., Интелектуалы во Франции: Вторая половина XIX века, М., 2005, с. 291.

[3] Ֆրանսիայում ինտելեկտուալների գործունեության համար լուրջ ազդակ հանդիսացավ 1894 թ. հետադիմական զինվորականության կողմից Ալֆրեդ Դրեյֆուսի դեմ թխված գործը, որին առանց ապացույցների դատապարտել էին ցմահ տաժանակրության: Ա. Դրեյֆուսի պաշտպանությամբ հանդես եկող ինտելեկտուալների գործունեության աշխուժացման գործում մեծ դեր խաղաց Է. Զոլայի «Ես մեղադրում եմ» /13-ը հունվարի 1898 թ./ նամակը: Ինտելեկտուալների պայքարի շնորհիվ Ա. Դրեյֆուսին ներում շնորհվեց:

[4] Հիմնախնդիրը քննարկելիս «ինտելիգենցիա» արտահայտության փոխարեն կօգտագործենք «մտավորականություն» եզրույթը, որ գրեթե նույն իմաստն է արտահայտում, սակայն միշտ չէ, որ մտավորականը կարող է ինտելիգենտ լինել, իսկ մտավորականությունը՝ ինտելիգենցիա:

նական: Կարծում ենք, որ մեր պայմաններում արդեն հասունացել է ժամանակը՝ հիմնավորելու այն թեզը, որ մտավորական կարող է լինել նաև գիտական գործունեությամբ չզբաղվող անձը: Այսպիսով, ստացվում է, որ ոչ մտավոր աշխատանքով զբաղվող մարդն էլ կարող է լինել մտավորական, իսկ մտավոր աշխատանքով զբաղվողը՝ ոչ: Արտաքուստ տարօրինակ այս մոտեցումը կարելի է հիմնավորել նրանով, որ մտավորական լինելը պահանջում է սոցիալական վարքագծի որոշակի կանոններ կամ առանձնահատկություններ, որոնց առկայությունը, մեր խորին համոզմամբ, կարևոր է այդ խավի սոցիալական կարգավիճակը լիարժեք բացահայտելու և արժևորելու համար: Ոչ միայն մտավորականության, այլև մյուս խավերի, շերտերի սոցիալական կացության, հասարակության աստիճանասանդղակում ունեցած տեղորոշման և հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրման ու սահմանման խնդրում, ինչպես անցումային փուլում գտնվող բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում առկա են մի շարք բարդություններ: Հայաստանում տեղի ունեցած արմատական փոխակերպությունները իրենց հետ բերել են սոցիալական կառուցվածքի նոր բաղադրատարրեր, «նոր հարաբերություններ, նոր դերեր, դիրքեր, նոր շերտեր և դասեր են ձևավորվել նախկինից տարբերվող հիմքի վրա»[1]:

Մերժելով բազմագործոն աշխարհի մարքսիստական միակերպ վերլուծությունը և սոցիալական աշխարհը պատկերելով երկակի բնույթ ունեցող բազմաչափ տարածության տեսքով՝ ֆրանսիացի սոցիոլոգ Պիեռ Բուրդիեն սոցիալական տարածության մեջ նշում է սոցիալական շերտերի ընկալման և գնահատման սխեմաների համակարգ՝ անվանելով դրանք «հաբիթուս»[2], որոնց ամբողջացման նկատառումով առանձնացնում է կապիտալի տնտեսական, սոցիալական, մշակութային և սիմվոլիկ ձևերը[3]: Մեթոդաբանական այս մոտեցումը թույլ է տալիս մտավորականության սոցիալական կացությունը և կարգավիճակը գնահատելիս որպես ուսումնասիրության չափանիշներ վերցնել ինչպես սոցիալական և նյութական դիրքերի ինքնագնահատականը, այնպես էլ մտավորականի սոցիալական ինքնազգացողությունը: Այստեղից գալիս է հայեցակարգային այն հիմքի որոնման անհրաժեշտությունը, թե ի՞նչ հատկանիշներով է առանձնանում մտավորականը:

Մտավորականության էության բացահայտման հիմքում պետք է դնել **մտավոր գործունեություն իրականացնողի և մտածող մարդու համադրության սկզբունքը, որը խարսխվում է բարոյական համընդհանուր ճանաչում գտած և հանրայնորեն ընկալելի արժեքային համակարգի վրա:** Մյուս կարևոր հատկանիշը, որով առանձնացվում է մտավորականը, ինչպես վերը նշվեց, զբաղվածությունն է: Այժմ էլ այս խավի զատորոշման հիմքում դրվում է հիշյալ գործոնը, որը, սակայն, միակողմանի է և արդեն խոցելի: Այն հարակցությամբ գալիս է խորհրդային արժեքային համակարգից: Խորհրդային պետությունը մտավորականություն հասկացության մեջ ընդգրկել էր շատ մեծ և ոչ համասեռ տարրեր, որոնք առնչություն չունեին այդ խավի հետ անգամ խորհրդային չափանիշներով: Այսպես, օրինակ, դրանցից էին գյուղա-

[1] Բալյան Լ, Սոցիալական շերտավորումը ԵՊՀ-ի ակադեմիական դաշտում, Փիլիսոփայության միջազգային ակադեմիա, Միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումներ, Պրակ. 3, Եր., 2006, էջ 33:

[2] Bourdieu P., Distinction: a Social Critique of the Judgment of Taste, trans. Richard Nice, 1984. Harvard University Press.

[3] Bourdieu P., The Forms of Capital: In:J: Richardson (Ed;) Handbook of Theory and Research for the Sociology of Education. New York: Greenwood Press.

կան, ստեղծագործական, տեխնիկական մտավորականությունը, մշակութային գործիչները և այլն: Մեզանում նույնպես հավասարության նշան է դրվել հայ գիտնականի, գրողի, երգչի, դերասանի, սպորտսմենի միջև: Փաստորեն խորհրդային մտավորականն այն անձն էր, որը զբաղված էր գիտությամբ, արվեստով, ուսուցմամբ: Այսօրվա մտավորականը նույնպես զբաղվում է գիտությամբ, արվեստով, ուսուցմամբ, բայց դա նրա միակ զբաղմունքը չէ. նա նաև բիզնեսմեն է, խոշոր կամ մանր սեփականատեր և այլն: Այլ խոսքով **մտավորականության սոցիալական կարգավիճակի համապարփակ բնութագրման՝ արհեստավարժության, գաղափարական, բարոյահոգեբանական հատկանիշներն անհրաժեշտ է դիտարկել նաև տնտեսական հենքի, համապատասխան եկամուտների չափանիշներով:** Այսինքն սոսկ գիտությամբ, գիտական մտքի ուսուցմամբ կամ գիտական հայտնագործություններով, ինչպես նաև մշակույթի ոլորտում զբաղված մտավորականությունը այլևս դարձել է բազմաշերտ:

Մինչ խորհրդայնացումը հայ մտավորականությունը ասպարեզ է եկել, տառապել ազգային ցավերով, վերլուծություններ կատարել և ազգային խնդիրների լուծմանն ուղղված ճանապարհներ է մշակել: Խորհրդային տարիներին այդ ավանդույթները հիմնականում ընդհատվել են: Հայ մտավորականների մի մասը «խորհրդայնացվել է», կորցրել ազգային դիմագիծը: Սակայն նրանք ոչ թե քիչ էին մտահոգված ազգային խնդիրներով, այլ արհեստականորեն կտրվել էին ազգային ավանդույթներից:

Խորհրդային գիտական գրականության մեջ նույնացվել են «ինտելիգենցիա», «մտավոր աշխատանքի մարդիկ» և «ծառայողներ» հասկացությունները: Ավելին, պաշտոնական վիճակագրությունը բնակչության սոցիալ-դասակարգային կազմը որոշելիս ինտելիգենցիան որպես առանձին սոցիալական խավ չէր դիտում, այլ մտցնում էր «ծառայողներ» կատեգորիայի մեջ:

Խորհրդային պետությունը երկար չգոյատևեց, բայց ուներ շատ առանձնահատուկ և մի շարք դրվատելի կողմեր, որոնք բնորոշ էին մի ընդհանուր մեծ պետության մաս կազմող Խորհրդային Հայաստանին: Խորհրդային հետպատերազմյան ժամանակաշրջանում մտավորականությունը՝ բարձրորակ պրոֆեսիոնալ մտավոր աշխատողների սոցիալական խումբը, Հայաստանում աճեց բավական արագ՝ քանակապես և որակապես: Հանրապետության սոցիալ-դասակարգային կազմում 1939 թ. մտավորականության տեսակարար կշիռը 12-13%-ից 1978 թ. հասել էր 24-25%-ի: Այսինքն հանրապետության երեք միլիոն բնակչից մոտ 750 հազարը մտավորականության սոցիալական խավն էր: Իսկ 1930 թ. եղել է մոտ 180 հազար: Չորս տասնամյակում այդ թիվն աճել է ավելի քան չորս անգամ: Աճման ավելի բարձր տեմպեր է ունեցել ժողովրդական տնտեսության մեջ անմիջապես զբաղված մտավորականությունը: Այսպես, 1941 թ. հանրապետության ժողտնտեսության մեջ զբաղված էին միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող 19,4 հազար մասնագետ, իսկ 1978 թ. վերջին՝ 264 հազար, որից 147 հազարը՝ բարձրագույն կրթությամբ, 117 հազարը՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ:[1] 1960-ական թվականներից ավելի է արագացել աշխատանքի ինտելեկտուալացման գործընթացը, որի ծավալմանը էապես նպաստել է գիտատեխնիկական նվաճումների արմատավորումը հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում: Այդ

[1] Տե՛ս Народное хозяйство АРМ. ССР в 1978 г., Ер., 1979, с.138.

ընթացքում քանակական մեծ աճ են ունեցել մտավորականության բոլոր ջոկատները: 1939-1970 թթ. երկու մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում արտադրական մտավորականությունն աճել է տաս անգամ՝ դառնալով ամենամեծ ջոկատը: 1970-1985 թթ. ժողտնտեսության մեջ զբաղված բարձրագույն և միջնակարգ բարձրագույն կրթության մասնագետների թիվը 149,1 հազարից հասավ 363,3 հազարի՝ աճելով մոտ 2,5 անգամ[1]: Քանակական մեծ փոփոխություններ կրեց նաև գիտական աշխատողների ջոկատը, որի թիվը աճել էր 12,5 անգամ:

Խորհրդային Միության գոյության տարիներին մտավորականությունն աչքի էր ընկնում սոցիալական միանգամայն առանձնահատուկ կացությամբ: Այդ առանձնահատկությունը նախ՝ կայանում էր նրանում, որ մտավորականությունը ձևավորվում էր հասարակության յուրաքանչյուր շերտերի ներկայացուցիչներից և այս առումով չկար որևէ սահմանազատում: Երկրորդ՝ մտավորականությունը համակարգի ամենահարգված խավն էր, և նա երևում էր ոչ միայն գիտական կամ մշակութային բնագավառներում, այլ նաև կառավարման համակարգում: Երրորդ՝ մտավորականութունն ուներ այն հստակ ըմբռնումը, որ ինքը պետական հոգածության առարկա է, քանզի խորհրդային պետությունը կարևորում էր գիտության և մշակույթի դերը որպես երկրի պաշտպանունակության ամրապնդման և առաջընթացի կարևոր նախապայման: Չորրորդ՝ մտավորականի աշխատանքի արդյունքը նյութապես երաշխավորված էր: Հինգերորդ՝ մտավորականի գործունեությունը տարեկան կամ հնգամյա կտրվածքով պլանավորվում էր:

Խորհրդահայ մտավորականությունը, սակայն, անկախ կոմունիստական պարտադրանքներից, որոնցից տեղերում խուսափելն անհնար էր, հաճախ տեղական ղեկավարության գերզգույշ և գաղտնի ցուցումներով ստեղծեց հայ մշակութային պատմական արմատներից չկտրված մի նոր մշակույթ, որն աննախադեպ է հայոց բազմադարյան պատմության մեջ:

Թեպետ խորհրդային տարիներին հասարակության սոցիալական կառուցվածքում մտավորականությունը ներկայացվում էր որպես մեկ ամբողջություն՝ շրջանցելով նրանում գոյություն ունեցող մյուս շերտերը, այնուամենայնիվ, 1950-ական թվականներին ԽՍՀՄ սոցիալական շերտավորումն ուսումնասիրող հեղինակներից Ա. Ինկելսը առանձնացնում է հետևյալ սոցիալական խմբերը՝ **կառավարող վերնախավ, մտավորականության վերին խավ, մտավորականություն կամ զանգվածային մտավորականություն, «սպիտակ օձիքներ», բանվոր դասակարգ, գյուղացիներ[2]:**

Ինչպես նկատում ենք, դեռևս խորհրդային տարիներին մտավորականությունը սոցիալական առումով միաշերտ չէր և, մեծ հաշվով, այսօր էլ մտավորականության մեջ առկա են տիտղոսավոր վերին խավը իր տարաբնույթ՝ գիտական, քաղաքական, ռազմական, մշակութային հատվածներով, և զանգվածային մտավորականությունը՝ տարաբնույթ խմբերով ու շերտերով: Այսպիսով, խորհրդային տարիներին մտավորականությունը հասարակության ամենաառանցքային դերակատարություն և անվիճելիորեն մեծ հեղինակություն ունեցող խավն էր, որ թե՛ քանակական, թե՛ որակական առումներով հասել էր բարձր մակարդակի:

---

[1] Տե՛ս Народное хозяйство АРМ. ССР в 1978 г., Ер., 1979, с. 192:

[2] Տե՛ս Մելքումյան Յու. Գ., Միջին խավը Հայաստանում,«Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3, Եր., 2010, էջ 193:

Հասարակության սոցիալական խմբերից ամենից ավելի մտավորականությունն է զգում պետության հոգատարության կարիքը: Մտավորականությունը տարիների ընթացքում ստեղծված ազգային հարստություն է, որը տնտեսական և հասարակական նոր վերափոխությունների պայմաններում բռնեց քայքայման ու փոշիացման հարկադրական ուղին: Չկարողանալով իրենց մասնագիտությամբ ու կոչումներով ապահովել նվազագույն կենսամակարդակ՝ մտավորականները գոյապահպանման դաժան պայքարի մեջ ձեռք էին զարկում ամեն մի պատահական աշխատանքի, միայն թե իրենց ընտանիքների համար հայթայթեին նյութական նվազագույն պայմաններ: Հասարակության կյանքում տեղի ունեցող ահռելի փոփոխությունները գլխի վրա շուռ տվեցին համակարգը: Շատ արագ, երբեմն կոպտորեն վերանայվեց բարոյական արժեքների ամբողջ համակարգը: Նախորդ հասարակության մեջ պաշտոնապես և ոչ միայն պաշտոնապես բարձրագույնը հոգևոր արժեքներն էին, իսկ հասարակության սերուցքը՝ մտավորականները, որոնք ունեին այնքան ճանաչում և հեղինակություն, որքան չունեին պետական և կուսակցական գործիչները: Նոր ժամանակներում առաջին պլան եկան մարդիկ, ովքեր հեռու էին հոգևոր հետաքրքրությունից: Այս հասարակության համար «հերոսներ» դարձան ձեռներեցները: Մտավորականության սոցիալական շերտերը, ինչպիսիք էին «գիտնականը», «դասախոսը», «ուսուցիչը», «արվեստագետը», «ինժեները», «հմուտ արհեստավորը», «հմուտ մասնագետը» և այլն, գործնականում դուրս մղվեցին[1]: Ստեղծված նոր պայմաններում մտավորականների հեղինակությունը կտրուկ անկում ապրեց: Հասարակությունն այնպիսի շրջանակներ դրեց, որ ամենաբարձր մտավորականն անգամ չի կարող հասարակությանն իր կողմը գրավել: Մտավորականության առաջատար դերը իշխանությունների կողմից մեծ մասամբ ոչ միայն անտեսվեց, այլև որոշ չափով նսեմացվեց, մտավորականությունը կամազրկվեց:

Նոր ժամանակներում մտավորականությունն այնպիսի պայմանների մեջ ընկավ, որ չէր կարողանում այլևս իրականացնել իր առաջատար դերը, ծառայել իր կոչմանը: Ինչպես նշում է Վ. Խոջաբեկյանը. «Դա բացատրվում է ոչ միայն մտավորականի սոցիալ-տնտեսական, նեղ առումով՝ նյութական անբարենպաստ վիճակով, այլև հասարակության կողմից նրա արհեստավարժ որակական հատկանիշների թերագնահատման փաստով: Մտավորականների ճնշող մասը արհեստավարժության առումով բարոյական արժեզրկման վտանգի առջև է հայտնվել»[2]: Նոր պայմաններում չստեղծվեց ազգային մշակույթի զարգացման հայեցակարգ: Գլոբալացում կոչվածը փոքր ազգերի մշակույթին մահացու հարված հասցրեց:

Խորհրդային Միության փլուզումից հետո հայ մտավորականությունն ապրեց վերափոխման մի ժամանակաշրջան, որը շարունակվում է մինչև այսօր: Հայ մտավորականության փոխակերպման գործընթացը սկսվեց 1988 թ. ազատագրական զարթոնքի շրջանից և ցայսօր չի ավարտվել: Հայաստանի երրորդ Հանրապետության առաջացումով թվում էր, թե ավելի խոր հայեցակարգային մոտեցում պետք է մշակվեր հայ մտավորականության նկատմամբ՝ ելնելով այն գիտակցությունից, **որ մեծ հակասությունների կիզակետում գտնվող երկիրը պետք է առաջնորդվի պետական այն**

[1] Տե՛ս Աղասի Զ.Թադևոսյան, Երևանի քաղաքային մշակույթը, «ՎԷՄ», թիվ 3, 2011, էջ 106:

[2] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Երևան, 1998, էջ 42:

ըմբռնմամբ, որ չի կարող ապահովել իր կայունությունն ու անվտանգությունը առանց սեփական պատմական փորձի ընկալման, անվտանգության համակարգի ստեղծման և դրանում մտավորականության դերի հաշվառման: Ցավոք, այդ դերի հաշվառումն այսօրվա դրությամբ էլ գրեթե շոշափելի չէ:

Անկախության շրջանում հայ մտավորականի գործունեությունը, նրա սոցիալական կարգավիճակը անհրաժեշտ է դիտարկել ա) մտավորականի, որպես անհատի արտաքին և ներքին ազատության ինքնադրսևորման ու ինքնագնահատման, բ) մտավորականի գործունեության արդյունքի իրացման ու հանրայնորեն նրա գնահատված լինելու մակարդակներում:

Արցախյան շարժման նոր փուլից սկսած և անկախության առաջին տարիներին շուկայական տարերային և անկանոն հարաբերությունների պայմաններում մտավորականության սոցիալական ու բարոյահոգեբանական արմատական փոխակերպումները պայմանավորված էին հետևյալ հանգամանքներով՝ 1. Պետական ֆինանսների ծայրահեղ սուղ հնարավորությունները անհնար դարձրին նախկին ծավալներով և ուղղություններով մտավոր աշխատանքի ֆինանսավորումը: 2. Զրկվելով պետական հոգածությունից՝ սահմանափակվեց մտավորականի գործունեությունը, տեղի ունեցավ ներքին արտահոսք. մտավորականությունը հայտնվեց զբաղմունքի այլ բնագավառներում, դիմեց արտագաղթի: 3. Մտավոր աշխատանքը վերածվեց գրեթե պահանջարկ չունեցող ապրանքի, մասնավորապես արտադրությունը դադարեց ունենալ գիտության և կրթության պահանջ: 4. Մտավոր աշխատանքի փոքրածավալ արդյունքի իրացումը մնաց հենց մտավորականի փխրուն ուսերին:

Այսպիսով, մտավորականութունը ենթարկվեց արմատական փոփոխությունների՝ քանակական, որակական, սոցիալական, գաղափարական, բարոյահոգեբանական առումներով:

Արցախյան շարժման նոր փուլից սկսած Հայաստանի երրորդ Հանրապետության տարիներին հայ մտավորականությունը կրեց որոշակի փոփոխություն հետևյալ շրջափուլերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր բնորոշ առանձնահատկությունները:

Առաջին. 1988-1991 թթ.: Այս շրջանը պետք է բնորոշել որպես հայ մտավորականության ազգային վերելքի, սոցիալական իմաստով հարաբերական կայունության, իշխանության օրենսդիր և գործադիր մարմինները համալրելու փուլ: 1988-1990 թթ. դեռևս չկար խորհրդային համակարգի փլուզման գաղափարը, ենթադրվում էր, որ համակարգի պահպանումով հնարավոր է հասնել նախատեսված խնդիրների լուծման: 1990 – 1991 թթ. մտավորականության մեջ չկար այն մտավախությունը, որ գալու է ճգնաժամի, անորոշության, հեղինակության անկման ու սոցիալական կացության փոփոխման ժամանակաշրջան:

Երկրորդ. 1991-1998 թթ. շրջափուլը պայմանականորեն կարելի է բաժանել ենթափուլերի: Դրանցից առաջինը 1991-1995 թթ. ենթափուլն է, որը բնորոշվում է որպես մտավորականության ճգնաժամի, փորձությունների, անորոշության, հետընթացի ժամանակաշրջան: Կաթվածահար եղան խորհրդային գիտակրթական և մշակութային օջախները, դադարեցվեց շատերի ֆինանսավորումը: 1992-1993 թթ.

գիտությանը հատկացվում էին ՀՆԱ -ի մեկ տոկոսից պակաս միջոցներ[1]: 1993 թ. մարտի 9-ին ՀՀ նախագահը տևական քննարկումներից հետո հրամանագիր ստորագրեց «ՀՀ Գիտությունների ակադեմիայի մասին»[2], որով կանոնակարգվեց վերջինիս վիճակը: Գիտությունների ազգային ակադեմիայի բյուջեն կրճատվեց և գիտնականներն իրենց ընտանիքի գոյությունը պահպանում էին՝ ստանալով նվազագույն կենսական պահանջները բավարարող գումարի միայն 1/10-րդը: Միջին գիտաշխատողը ամսական վաստակում էր 30 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ[3]: Պետական բյուջեից գիտությանը հատկացվող միջոցները /տոկոսով ՀՆԱ-ից/ 1990 թ. 0,5 տոկոսից 1999 թ. իջել է 0,2 տոկոսի[4]:

Սոցիալական այն խավի հիմնական զանգվածները, որոնցից դուրս էին եկել քաղաքական նոր վերնախավի ներկայացուցիչները, ի սկզբանե մատնվեցին անուշադրության: Մտավորականության խնդիրները մղվեցին հետին պլան, տարալուծվեցին անցման շրջանի բազմաբարդ մարտահրավերների որոգայթներում: Դա պայմանավորված էր մի կողմից պատերազմական ծայրահեղ ծանր իրավիճակով, երկրի մինչև օրս շարունակվող շրջափակմամբ, էներգետիկ ճգնաժամով և այլն, մյուս կողմից՝ մտավորականներից կազմված նոր վերնախավը վերածվելով քաղաքական իշխանության՝ առանձնացվեց զանգվածային մտավորականությունից: Խեղվեց մտավորական հասկացությունը:

1991-95 թթ. տարբեր գնահատականների համաձայն Հայաստանի բնակչության 80 տոկոսից ավելին աղքատ էր, որի շարքերում հայտնվեց նաև զանգվածային մտավորականությունը՝ համալրելով հանրապետության աղքատների, ծայրահեղ աղքատների, կարիքավորների շարքերը: Կորցրեց հասարակության առաջնորդի, հասարակական կարծիք ձևավորողի, գաղափարներ մշակելու և առաջադրելու իր գործառույթները: Մտավորականության նկատմամբ հստակ քաղաքականության բացակայության հետևանքով սոցիալական շարժունության իմաստով նա կանգնեց անորոշության և կամազրկման ճանապարհին:

1996 թ. մինչև 1999 թ. երկրորդ ենթափուլում մտավորականության սոցիալական կացության նոր միտումներ դրսևորվեցին: Նախորդ ենթափուլում սկսված և շարունակվող գործընթացներին գումարվեցին նորերը: Անորոշությունից անցում կատարվեց դեպի որոնումների, նոր համահարաբերությունների ձևավորման, դիրքերի հստակեցման, մտավորականության շերտավորման խորացման փուլ: Այդուհանդերձ, 1996-1999 թթ. ենթափուլում Հայաստանի տնտեսական կյանքի անկման կասեցման և փոքրիշատե կայունացման միտումները հնարավորություն ստեղծեցին մտավորականության համար մտնելու որոնումների նոր ժամանակաշրջան: Սոցիալական դերերի և դիրքերի հստակեցումը իր հետ հանգեցրեց սոցիալական շերտերի և խմբերի որոշակիացմանը: Թեպետ փոքր, բայց կայուն աշխատավարձը զանգվածային մտավորականության համար ստեղծեց աղքատների խմբերից դեպի միջին խավ անցնելու միտումներ:

---

[1] Տե՛ս Մարգարյան Ա., Գիտությունը տնտեսութեան համակարգափոխության պայմաններում, «Դրոշակ», թ.3, 121-25 փետրվար, 1999, էջ 17:

[2] Տե՛ս Առաջարկություններ 1997-2001 թթ. ՀՀ-ում գիտության զարգացման հիմնահարցերի վերաբերյալ, Եր., 1997:

[3] Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց, 2001, էջ 41:

[4] Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 1999, էջ 52:

Երրորդ փուլը ընդգրկում է 2000 – 2011 թթ. Մտավորականության զարգացման այս փուլը թերևս կարելի է բաժանել երկու ենթափուլի՝ առաջին՝ 2000-2008 թթ., երկրորդ՝ 2008 թ.-ից հետո ընկած շրջան: Այս փուլը կարելի է ամբողջությամբ բնութագրել մտավորականության ադապտացման և նրանում գոյացած շերտերի բյուրեղացման փուլ: Երրորդ փուլի առանձնահատկությունը այն է, որ նախորդ շրջափուլի հիմնականում տարերային զարգացումներին փոխարինեցին որոշակիորեն կանոնակարգված մոտեցումներ, հստակեցվեցին մշակույթի, գիտության, կրթության, առողջապահության, սոցիալական ոլորտների ծրագրերը, ընդունվեցին մի շարք օրենքներ: Դրանք բոլորն էլ, անշուշտ, առնչվում էին մտավորականության գործունեությանը, նրա սոցիալական կարգավիճակին և շերտավորմանը: Այսպես, 2000 թ. դեկտեմբերի 26-ին ընդունվեց «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2001 թ. «ՀՀ-ում գիտության զարգացման հայեցակարգը», 2001 թ. «Գիտական և գիտատեխնիկական բազային, պայմանագրային - թեմատիկ և նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները, 2001 թ. «Գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորային կազմակերպությունների մասնավորեցման և շահարկման հայեցակարգերը»: 2001 թ. ՀՀ նախագահը հրամանագիր ստորագրեց «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդ ստեղծելու մասին»: 2002 թ. օգոստոսի 15-ին ՀՀ կառավարությունը ընդունեց «ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին» որոշում[1], որով պետության կողմից նախանշվում էին հիմնական գերակա ուղղությունները: Դրանք էին՝ հայագիտությունը, դեղագործությունը, կիրառական հետազոտությունները, հատուկ նշանակության հետազոտությունները, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաները և այլն: Սրանցից առաջին երկուսի դեպքում ավելացվում էին հաստիքները 2 տոկոսով[2]: 2003 թ. ապրիլի 11-ին ընդունվեց «Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» ՀՀ օրենքը, 2004 թ. ապրիլին՝ «Մշակույթի պահպանման, տարածման և զարգացման 2004 թ. պետական տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը, 2004 թ. դեկտեմբերի 14-ին՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը[3]: Վերը հիշատակված օրենքները կարևոր էին նաև գիտության և մշակույթի ասպարեզներում զբաղված մտավորականության դերի հստակեցման և սոցիալական կարգավիճակի կայունացման իմաստով:

Այս ընդգրկուն ժամանակահատվածում ձևավորվեց հայ մտավորականության մի խայտաբղետ կերպար: Որոնումների շրջանը դարավերջին ավարտվեց և սկսվեց նոր մտավորականության կայունացումը: Նոր մտավորականությունը բնութագրվում է հետևյալ կերպ՝ **ի տարբերություն խորհրդահայ մտավորականության, նրա զբաղմունքը միայն գիտամշակութային, կրթական, սոսկ մտավորականի գործունեությունը չէ: Ուսուցիչը, դասախոսը, գիտաշխատողը, բժիշկն ու մշակութային գործիչն ունի նաև այլ զբաղվածություն. նա բիզնեսմեն է, ձեռնարկատեր, ձեռներեց:**

---

[1] Տե՛ս ՀՀ կառավարության պաշտոնական տեղեկագիր N 40, Եր., 2002, էջ 128:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 1187, թ. 26:
[3] Նշված օրենքները տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգի պաշտոնական կայքում, Arlis.am:

Անշուշտ, սա բնորոշ է ոչ բոլոր մտավորականներին: Նրանց մեջ կան այնպիսիք, ովքեր ապրում են սոսկ մտավորականի կյանքով, սոցիալական ոչ նպաստավոր պայմաններում: Նրանց ապրուստի հիմնական միջոցը աշխատավարձն է, որի անբավարար լինելը ստիպում է զուգահեռաբար աշխատել գիտական, կրթական, մշակույթի մեկ այլ ձեռնարկությունում ևս: Այլ աշխատանքի կազմակերպման կամ այլ զբաղվածությամբ փող վաստակելու անհնարինությունը մտավորականության այս շերտերին տանում է դեպի կոռուպցիոն ռիսկեր: Մտավորականության այս երկու շերտերի մոտ էլ գիտությունն առաջնային պլան մղված չէ: **Զբաղվածությունը կամ գերզբաղվածությունը, բնականաբար, հանգում են գիտության որակի անկմանը:** Այս փուլում առավել ակնառու դարձավ դեռևս նախորդ փուլի վերջերից նկատվող և խորացող մի անցանկալի երևույթ՝ մտավորականության աստիճանաբար դուրս մղումը պետական կառավարման համակարգից, մասնավորապես Ազգային ժողովից: Սա ևս մտավորականության սոցիալական աստիճանակարգի և սեփական դերի ու դիրքի գնահատման նոր իրողություն դարձավ: Երրորդ փուլի կեսերին՝ սկսած դեռևս 2007 թ., նկատելի դարձավ իշխանությունների որոշակի շրջադարձ դեպի մտավորականությունը: 2008 թ. նախագահական ընտրություններից հետո երկրում ստեղծված քաղաքական ճգնաժամն հաղթահարելու և հասարակական հանդուրժողականություն ձևավորելու նպատակով ստեղծվեց Հանրային խորհուրդ, որի մեջ նաև մտավորականության ընդգրկման միջոցով փորձ է արվում լսելի դարձնել հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրների շուրջ մտավորականության ձայնը: Սակայն ասել, թե խորհուրդը լիովին ծառայում է իր բուն նպատակին և կոչմանը, հեռու կլինի իրականությունից: Այնուհանդերձ, մտավորականությունը, մասնավորապես նրա տիտղոսակիր հատվածը վերջին տասնամյակում երբեմն, անհրաժեշտությունից ելնելով՝ հիմնականում հոբելյանական առիթներով հայտնվում է իշխանությունների ուշադրության կենտրոնում: Մտավորականության մյուս զանգվածային շերտերը իրենց հիմնախնդիրներով տակավին դուրս են մնում հարկավոր ուշադրությունից:

Այս փուլում նկատելի է դառնում մի նոր ուշագրավ երևույթ, քաղաքական վերնախավի կողմից տնտեսական կապիտալի որոշակի ուղղորդում դեպի մշակութային կապիտալի դաշտ: Դա դրսևորվում է ինչպես բարեգործությունների տեսքով, այնպես էլ իշխանական վերնախավի շատ ներկայացուցիչների կողմից բուհական գիտական խորհուրդների ղեկավարությունը ստանձնելու ճանապարհով: Բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ նյութական և սոցիալական կապիտալի համապատասխան հիմքեր ստեղծելուց հետո հավակնում են ներթափանցելու նաև մշակութային կապիտալի ոլորտ: Պատահական չէ, որ նրանք պաշտպանում են գիտական ատենախոսություններ և ձեռք են բերում նաև գիտական աստիճաններ, կոչումներ:

Ինչպես տեսնում ենք, վերջին երկու տասնամյակում փոխվել է հայ մտավորականի էությունը, և նրա կերպարն ամբողջացնելու համար բավարար չեն հին սկզբունքներն ու չափանիշները, մանավանդ որ նրա շերտավորումն իրողություն է:

Տեսաբաններից Պ. Սորոկինը սոցիալական շերտավորումը սահմանում է որպես «մարդկանց որոշակի ամբողջության տարբերակում դասերի հիերարխիկ կարգով՝ ըստ իրավունքների, պատասխանատվությունների, արտոնությունների, անհավասար բաշխման, ընդհանրության անդամների միջև իշխանության և ազդեցության

առկայության»[1]: Փորձենք Հայաստանում մտավորականության տարաբնույթ շերտերի առկայությունը ներկայացնել Սորոկինի սահմանման շրջանակում: ԵՊՀ-ի ակադեմիական դաշտում գործող համալսարանական դասախոսների շրջանում անցկացված ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են հետևյալ հիմնական խմբերը: Առաջին խումբը պայմանականորեն անվանել են ձեռներեց մասնագետների խումբ, ովքեր կարողանում են իրենց մասնագիտության շնորհիվ ապահովել տնտեսական կապիտալի բարձր մակարդակ, աչքի են զարնում սոցիալական ու քաղաքական բարձր ակտիվությամբ:

Տարեցների խումբը միջինից բարձր տարիքի դասախոսներն են՝ սոցիալական և սիմվոլիկ կապիտալներով: Ստեղծագործող էլիտան այն խումբն է, որի մոտ մշակութային կապիտալը գերազանցում է կապիտալի բոլոր տիպերին: Առանձնացվում է նաև կին դասախոսների խումբը: Համալսարանական դաշտում ցածր դիրք են գրավում այսպես կոչված պասիվների խումբը[2]: Վերոհիշյալ խմբերի բնութագրման համար, ինչպես նկատելի է, հիմք են ընդունվել մասնագիտական, կրթական, սեռատարիքային, եկամտային և այլ չափանիշներ, որոնցով բնութագրվում են ներկայումս մտավորականության բոլոր շերտերը: Համալսարանի ակադեմիական դաշտի այս շերտավորումը պարզորոշ ցույց է տալիս, որ մտավորականությունն առհասարակ դարձել է բազմաշերտ, որի բաղադրատարրերը դառնում են որոշակի և հարաբերականորեն կայուն: Մեր խորին համոզմամբ այսօրվա հայ մտավորական խավի կամ շերտի մեջ պետք է առանձնացնել հետևյալ ենթաշերտերը՝

ա. Մտավորականներ, ովքեր ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ այսօր ունեն մեկ հիմնական զբաղմունք՝ մտավոր աշխատանք, որի համար վճարում է պետությունը: Սա կազմում է այս շերտի նվազ ապահով ենթաշերտը: **բ.** Մտավորականներ, ովքեր աշխատում են ոչ պետական, այլ մասնավոր կրթական կամ գիտական հաստատություններում և վաստակում են համեմատաբար ավելի շատ: **գ.** Մտավորականներ, ովքեր չունեն աշխատանք ո՛չ պետական և ո՛չ էլ մասնավոր գիտական կամ ուսումնական հիմնարկներում, բայց զբաղվում են իրենց կարողությանը համապատասխան պատահական աշխատանքով, որ ապահովում է նրա նյութական պահանջները, խնդիրները: **դ**. Մտավորականներ, ովքեր մտավոր աշխատանքին կամ գիտակրթական և նմանատիպ գործունեությանը զուգընթաց ունեն իրենց մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը, որն ապահովում է նյութապես:

Թերևս չենք սխալվի, եթե առանձնացնենք մտավորականների նաև մի շերտ, որն ունենալով անհատական նյութական ակնկալիքներով զբաղվածություն՝ միաժամանակ աշխատում է գիտական, ուսումնական կամ մշակութային այլ հաստատություններում:

Սույն ուսումնասիրությամբ նպատակ չունենք առանձին-առանձին անդրադառնալու վերոհիշյալ շերտերին: Արձանագրենք, որ շերտավորումը և սոցիալական փոխակերպումները ընդհանրական մտածողությունից զրկեցին հայ մտավորականությանը՝ նրան վերածելով կենցաղային կարիքների գերակայությունը ակամա ընդունողի, գիտական մտքի արժեքավոր արգասիքը արտաքին շուկա հանողի դերում, որի գնորդը,

[1] Сорокин П., Человек. Цивилизация. Общество. М., 1992, с. 369.

[2] Տե՛ս Բալայան Լ., Սոցիալական շերտավորումը ԵՊՀ-ի ակադեմիական դաշտում, Միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումներ, Եր., 2008, էջ 39-44:

ցավոք, միշտ չէ, որ մեր պետությունն է: Հայտնի ճշմարտություն է, որ պետությունների գոյության և առաջընթացի հիմքը գիտությունն է, նա է ուժի հզորության աղբյուրը: Ինչպես վերը նշեցինք, սոցիալական շերտավորման վերջին փուլում նկատելի են շերտերի և խմբերի որոշակիացման, հստակեցման և կայունացման միտումները: Սակայն եթե որոշակի են հարուստների և աղքատների խմբերը, ապա միջին խավը[1], որի միջին և ստորին շերտերում է հիմնականում գտնվում մտավորականը, դեռևս թվացյալ կայունության փուլում է և շատ արագորեն կարող է ցածր կարգավիճակում լինել[2]:

Հարկ է ուշադրություն դարձնել մի կարևոր իրողության վրա ևս: Այսօր արդեն բավական ստվար թիվ են կազմում մտավորականների կազմակերպությունները, որոնք ունեն իրենց պարբերականները, որ իբր մտահոգված են հայության ապագայով: Սակայն չկա մի ընդհանուր մոտեցում: Ծուկայական հարաբերությունները մտել են մտավորականների աշխարհը, նրանք ստեղծագործում են հիմնականում դրամ վաստակելու համար: Մտավորականության սոցիալական և դիրքային խայտաբղետ նկարագիրը, նրա նկատմամբ պետական հստակ քաղաքականության բացակայությունը առկա փաստ է:

Պետք է շեշտել, որ անցյալ դարի վերջերից ցայսօր ձևավորվում է մտավորականի մի նոր կերպար, որի համար ազգապահպանումը և ազգային անվտանգությունը գերխնդիր չէ: Մտավորականությունը դեռևս կայացման և հասարակության մյուս խավերի հետ համահարաբերակցության նոր ձևերի մշակման ու արմատավորման կարիք ունի: Պետության խնդիրն է մտավորականությանը անհատական, եսակենտրոն և հատվածական հետաքրքրություններից անհրաժեշտաբար միասնական դաշտ ուղղորդելը, որտեղ նա կգերադասի ազգային, հանրային, համապետական շահերը, որոնք նրանից պահանջում են մասնագիտական և բարոյական բարձր հատկանիշներ, քաղաքացիական համարձակություն:

Эдуард Зограбян, Интеллигенция в общественной структуре в третей Республики Армении, - Одной из современной социальной стержневой структурой Армении является интеллигенция. Освободившись от идейной зависимости, получив свободу творения в условиях рыночных отношений, лишившись государственного покровительства, интеллигенция оказалась в совершенно новом для себя социальном положении. В основном живя на доходах, получаемых от государства, потеряв минимальные возможности обеспечения жизненных условий, интеллигенция полностью вступила в необычный и невыгодный для себя период жизни. Интеллигенция в Армении лишилась бывшего высокого авторитета и репутации, оформления прогрессивных идей и исполнения ведущей роли в обществе. Одна часть интеллигенции эмигрировала, произошла утечка высококвалификационных специалистов.

---

[1] Տե՛ս Մելքումյան Յու, Միջին խավը Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 3, 2010թ.:

[2] Ըստ Ա.Թադևոսյանի՝ Երևան քաղաքում միջին և կայուն եկամուտ ունեցողները հաշվվում են 10%, աղքատները՝ 30%, հարուստները՝ 2%. իսկ դրանց բոլորի միջև գոյատևման տարբեր կարգավիճակներում և աղքատության ռիսկային գոտում գտնվողները՝ 58% :

В условиях массовой и широкомасштабной поляризации интеллигенция быстро расслоилась, оказавшись по социальной шкале, на среднем уровне различных слоев насиления.

Eduard Zohrabyan, The Intellectuals in Public Structure in the Third Republic of Armenia, - One of the modern social core structures of Armenia is the intelligentsia. Releaving of ideological dependences, obtaining freedom of creation in the condition of market relations and depriving of state protection the intelligentsia appeared in absolutely new social status. On the whole the intelligentsia having derived from minimal chance of ensuring vital life conditions utterly assume uncertain, unusual, unprofitable period of life. The intelligentsia went into reverse, deprived its former high authority and reputation, registration of progressive ideas and fulfillment of leading role in society in quantity as well as in quality. One part of intelligentsia emigrated, the forfeit of qualified specialists took place. On the condition of very rapid mass and wide-scaled polarization intelligentsia devided into layers and in particular on the criteria of Armenia appeared on the average level of social section of population.

Էդուարդ Զոհրաբյան - պատմական գիտությունների թեկնածու, Հայաստանին հարակից երկրների ամբիոնի դոցենտ: